ՍԴ3/0138/01/21
(ՀԿԴ/0114/01/22)

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՎԱՐՈՒՅԹԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2 սեպտեմբերի 2024 թվական ք.Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ Լիլիթ Թադևոսյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ Համլետ Ասատրյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահ Արթուր Դավթյանս, ուսումնասիրելով թիվ ՍԴ3/0138/01/21 (ՀԿԴ/0114/01/22) քրեական վարույթի առարկայական ընդդատության մասին վեճը լուծելու համար վարույթը ՀՀ Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2024 թվականի օգոստոսի 9-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի Ն Ք

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2021 թվականի դեկտեմբերի 6-ին Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում ստացվել է թիվ 90963318 (ՍԴ3/0138/01/21) քրեական գործն ըստ մեղադրանքի՝ Մկրտիչ Երեմի Չախախյանի՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական օրենսգիրք) 358.1-րդ հոդվածի 1-ին մասով, 358.1-րդ հոդվածի 4-րդ մասով, Լուկաշ Սամվելի Պետրոսյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 2-րդ մասով, 360-րդ հոդվածի 2-րդ մասով, 375-րդ հոդվածի 2-րդ մասով, Դավիթ Մնացականի Կարապետյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 2-րդ մասով և Դավիթ Աշոտի Սարգսյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 1-ին մասով:

2021 թվականի դեկտեմբերի 14-ին թիվ ՍԴ3/0138/01/21 քրեական գործն ընդունվել է դատավոր Բ.Բախշիյանի վարույթ և 2021 թվականի դեկտեմբերի 24-ին որոշում է կայացվել դատական քննություն նշանակելու մասին:

1.1. Դատավոր Բ.Բախշիյանի լիազորությունները կասեցված լինելու հիմքով թիվ ՍԴ3/0138/01/21 քրեական գործը վերաբաշխվել է դատավոր Վ.Ջիվանյանին և 2022 թվականի մարտի 10-ին քրեական գործն ընդունվել է վարույթ:

1.2. Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2022 թվականի օգոստոսի 30-ի որոշմամբ թիվ ՍԴ3/0138/01/21 քրեական գործն ըստ ընդդատության ուղարկվել է Հակակոռուպցիոն դատարան:

2. Հակակոռուպցիոն դատարանը 2022 թվականի սեպտեմբերի 22-ին որոշում է կայացրել թիվ ՀԿԴ/0114/01/22 (ՍԴ3/0138/01/21) քրեական գործը վարույթ ընդունելու մասին:

Հակակոռուպցիոն դատարանի՝ 2023 թվականի նոյեմբերի 24-ի որոշմամբ Դավիթ Աշոտի Սարգսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը դադարեցվել է՝ վաղեմության ժամկետն անցնելու հիմքով:

Հակակոռուպցիոն դատարանի՝ 2024 թվականի փետրվարի 1-ի որոշմամբ Դավիթ Մնացականի Կարապետյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 2-րդ մասով քրեական հետապնդումը դադարեցվել է՝ վաղեմության ժամկետն անցնելու հիմքով:

2.1. Հակակոռուպցիոն դատարանը 2024 թվականի մարտի 11-ին որոշում է կայացրել թիվ ՀԿԴ/0114/01/22 քրեական գործն ըստ առարկայական ընդդատության Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան փոխանցելու մասին:

3. Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի մարտի 29-ին որոշում է կայացրել քրեական գործի վարույթը ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

3.1. Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի օգոստոսի 9-ին որոշում է կայացրել թիվ ՍԴ3/0138/01/21

(ՀԿԴ/0114/01/22) քրեական գործով ընդդատության մասին վեճը լուծելու համար վարույթը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին:

4. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2024 թվականի օգոստոսի 21-ին:

Ընդդատության հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

5. Լուկաշ Սամվելի Պետրոսյանը ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 2-րդ մասով, 360-րդ հոդվածի 2-րդ մասով և 375-րդ հոդվածի 2-րդ մասով ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ *«նա զբաղեցնելով ՊԲ 36534 զորամասի 5-րդ հրաձգային գումարտակի 13-րդ հրաձգային վաշտի հրամանատարի պաշտոնը, կոչումով կապիտան, 08.09.2018թ. զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ ծեծի է ենթարկել իր նկատմամբ սպորադաս հանդիսացող, իր անմիջական ղեկավարության ներքո գտնվող վաշտի ժամկետային պարտադիր զինծառայող, շարքային Գևորգ Սուրենի Հարոյանին, մասնավորապես, 08.09.2018թ.՝ երեկոյան, տեղեկանալով, որ Գ.Հարոյանն ընդգրկված լինելով ճաշարանի վերակարգում, ճաշարանի հերթապահ, նույն վաշտի 2-րդ դասակի հրամանատար, կապիտան Դավիթ Կարապետյանի կողմից ազատվել է վերակարգից, սակայն տևական ժամանակ գումարտակի մասնաշենք չի ներկայացել, նրան հայտնաբերելու և այդ կապակցությամբ պարզաբանումներ կատարելու նպատակով, ինչպես նաև ենթադրելով, որ նույն օրը՝ երեկոյան, սպայական շենքերի մոտ իր հետ վիճաբանության մեջ մտած քաղաքացիական անձինք հնարավոր է կապ ունենան Գ.Հարոյանի հետ և նրա կողմից հրավիրված լինեն, ցանկանալով նշված հարցի շուրջ անձամբ զրուցել Գ.Հարոյանի հետ, սպայական բնակարանից ժամը 22:00-ի սահմաններում մեկնել է զորամասի մշտական տեղակայման վայր, Դ.Կարապետյանի հետ միասին ճաշարանից գնացել է 5-րդ գումարտակի մասնաշենք, ապա միայնակ մտել է իր աշխատասենյակ, իսկ Դ.Կարապետյանը շարունակել է որոնել Գ.Հարոյանին, որից կարճ ժամանակ անց՝ ժամը 22:30-ի սահմաններում, վիճաբանության ձայներ լսելով դուրս է եկել աշխատասենյակից և*

զորանոցի ննջարանների մոտ ականապես է եղել Դ.Կարապետյանի և Գ.Հարոյանի միջև առաջացած ծեծկուրուքին, միջամտել և դադարեցրել է վիճաբանությունը, որից հետո փորձել է կարգի հրավիրել Գ.Հարոյանին և նույն վայրում ծեծի է ենթարկել նրան՝ երեքից չորս անգամ աջ և ձախ ձեռքերով ապտակներ է հասցրել վերջինիս դեմքին, ապա Գ.Հարոյանին հրավիրել է աշխատասենյակ և զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ՝ սպային՝ Դ.Կարապետյանին հակաճառելու և նրան հարվածելու, ինչպես նաև վերակարգից ազատվելուց հետո փևական ժամանակ գումարտակի մասնաշենք չներկայանալու պատճառով մեկ անգամ ապտակել է Գ.Հարոյանի դեմքին, ապա այլ բռնություն է գործադրել նրա նկատմամբ՝ համազգեստից բռնելով քաշել և գցել է աշխատասենյակում առկա բազմոցին, ապա նույն պատճառով կրկին ծեծի է ենթարկել նրան՝ երեքից չորս անգամ ապտակներ է հասցրել Գ.Հարոյանի դեմքին:

Այսինքն Լուկաշ Սամվելի Պետրոսյանին մեղսագրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցավոր արարքի կատարում:

Բացի այդ, Լուկաշ Պետրոսյանը, զբաղեցնելով 13-րդ հրաձգային վաշտի հրամանատարի պաշտոնը, կոչումով կապիտան, 08.09.2018թ.՝ ժամը 22:30-ի սահմաններում, իր աշխատասենյակում, ծառայողական պարտականությունները կատարելու կապակցությամբ՝ սպային՝ Դ.Կարապետյանին նույն օրը հակաճառելու և նրան հարվածելու պատճառով, ծնողին ուղղված սեռական բնույթի հայհոյանք է հնչեցրել Գ.Հարոյանի հասցեին՝ անպարկեշտ ձևով սխորացնելով իր նկատմամբ սխորադաս հանդիսացող Գևորգ Հարոյանի պատիվն ու արժանապատվությունը:

Այսինքն Լուկաշ Սամվելի Պետրոսյանին մեղսագրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 360-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցավոր արարքի կատարում:

Բացի այդ, Լուկաշ Պետրոսյանը, զբաղեցնելով 13-րդ հրաձգային վաշտի հրամանատարի պաշտոնը, կոչումով կապիտան, հանդիսանալով պաշտոնատար անձ, զինվորական կանոնադրությունների համաձայն օժտված լինելով վերահսկիչ ու կարգադրիչ լիազորություններով, 30.09.2018թ.՝ ժամը 21:00-ի սահմաններում, նույն վաշտի 3-րդ դասակի 2-րդ ջոկի հրամանատար, պարտադիր ժամկետային

զինծառայող, կրտսեր սերժանտ Մկրտիչ Երեմի Չախախյանից տեղեկանալով 29.09.2018թ.՝ ժամը 12:30-ի սահմաններում, վաշտի ննջասենյակում վերջինիս ու նույն դասակի պարտադիր ժամկետային զինծառայող, շարքային Գևորգ Սուրենի Հարոյանի միջև տեղի ունեցած վիճաբանության ընթացքում Մ.Չախախյանի կողմից Գ.Հարոյանի ծնողի հասցեին հայհոյանք հնչեցնելու, միմյանց քաշքշելու և փոխադարձ հարվածներ հասցնելու դեպքի մասին՝ այդպիսով անձամբ տեղեկություններ ստանալով իրեն ենթակա անձնակազմի կողմից ենթադրյալ հանցագործություններ կատարելու դեպքի մասին, ՀՀ ՔՕՒ կարգապահական կանոնագրքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի և ՀՀ ՊՆ 25.12.2015թ. թիվ 1525 հրամանի համաձայն պարտավոր լինելով կատարված դեպքի մասին անհապաղ զեկուցել վերադաս հրամանատարությանը, ինչպես նաև հայտնել իրավապահ մարմիններին, հակառակ ծառայության շահերի, ենթակա զինծառայողների մոտ իր «հեղինակությունը» բարձրացնելու, դեպքը վերադաս հրամանատարությունից կոծկելու և այդ կերպ Մ.Չախախյանին «հովանավորելու» անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով, խախտելով ՀՀ ՔՕՒ ներքին ծառայության կանոնագրքի 13-րդ, 16-րդ, 141-րդ հոդվածների պահանջները, դրսևորել է իշխանության անգործություն՝ չի կատարել օրենքով և զինվորական կանոնադրություններով իր վրա դրված պարտականությունները, իրավախախտման դեպքի մասին չի զեկուցել վերադաս հրամանատարությանը, ինչի արդյունքում չի կատարվել ՀՀ ՊՆ 1525 հրամանի պահանջները՝ դեպքի մասին իրավապահ մարմիններին հաղորդում չի տրվել և ենթադրյալ իրավախախտման դեպքի կապակցությամբ չեն սկսվել հանցագործությունների ժամանակին բացահայտմանն ու հետագայում դրանց բացասական ազդեցության կանխարգելմանն ուղղված քրեադատավարական իրավահարաբերություններ, ավելին՝ վերջինս, շարունակելով իր հակաօրինական գործունեությունը, չարաշահել է իր պաշտոնեական դիրքը, մասնավորապես՝ 30.09.2018թ. ժամը 23:30-ի սահմաններում, իր աշխատասենյակում, նշված վիճաբանության և Մ.Չախախյանի կողմից Գ.Հարոյանի ծնողի հասցեին հայհոյանք հնչեցնելու մասին վերջինիս կողմից հեռախոսով եղբորը տեղեկացնելու վերաբերյալ Գ.Հարոյանի հետ պարզաբանումներ կատարելու ընթացքում, նախատել և զինվորական ծառայության

պարտականությունները կատարելու կապակցությամբ՝ առանց իրեն՝ որպես վաշտի հրամանատարի, դեպքի մասին զեկուցելու ու եղբորը տեղեկացնելու՝ այդպիսով վաշտի «ներքին խոհանոցը դուրս հանելու» և իրեն անտեսելու պատճառով, ծնողին ուղղված սեռական բնույթի հայհոյանք է հնչեցրել իր նկատմամբ ստորադաս հանդիսացող Գ.Հարոյանի հասցեին՝ անպարկեշտ ձևով ստորացնելով նրա պատիվն ու արժանապատվությունը, ինչի արդյունքում անզգուշությամբ առաջացել են նյութական ծանր հետևանքներ՝ 01.10.2018թ. ժամը 10:50-ի սահմաններում, Գ.Հարոյանը, Լուկաշ Պետրոսյանի, ինչպես նաև Մկրտիչ Չախախյանի գործողությունների հետևանքով գտնվելով խիստ ընկճված վիճակում, վաշտի զինանոցում համածառայող, շարքային Գոո Հովսեփի Ցոցիկյանին ամրակցված ԱԿ-74 տեսակի 1328223 համարի ինքնաձիգից մեկ կրակոց է արձակել իր կրծքավանդակի ձախակողմյան հատվածում և տեղափոխվել Մարտունու զինհոսպիտալ, որտեղ նույն օրը՝ ժամը 15:05-ին, գրանցվել է նրա կենսաբանական մահը:

Այսինքն Լուկաշ Սամվելի Պետրոսյանին մեղսագրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցավոր արարքի կատարում (…)»[1]*:*

6. Հակակոռուպցիոն դատարանը 2024 թվականի մարտի 11-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) 2003 թվականի ապրիլի 1-ին ընդունված և 01.07.2022թ. ուժը կորցրած ՀՀ քրեական օրենսգրքի N 6 հավելվածի համաձայն՝ «Հոդված 375. Իշխանությունը չարաշահելը, իշխանազանցությունը կամ իշխանության անգործությունը» ներառվել են կոռուպցիոն հանցանքների ցանկում:*

2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ու 01.07.2022թ. ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգրքի N 1 հավելվածի համաձայն՝ «Հոդված 549. Իշխանազանցությունը կամ իշխանությունը չարաշահելը» ներառվել է կոռուպցիոն հանցանքների ցանկում:

2024 թվականի հունվարի 16-ին ընդունված և 2024 թվականի փետրվարի 6-ին ուժի մեջ մտած «ՀՀ քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ

[1] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 12, թերթեր 121-123:

կատարելու մասին» ՀՕ-31-Ն օրենքի համաձայն՝ «Հոդված 7. Օրենսգրքի հավելված N 1-ում՝ «Հոդված 549. Իշխանազանցությունը կամ իշխանությունը չարաշահելը» բառերից հետո լրացնել «(բացառությամբ երբ արարքը կատարվել է ոչ շահադիտական դրդումներից ելնելով և բռնություն գործադրելով, բռնություն գործադրելու սպառնալիքով կամ զենք կամ հատուկ միջոց օգտագործելով)» բառերով (…)»:

(…)

[ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի](…) օբյեկտը օրենքով և այլ նորմատիվ ակտերով սահմանված գինվորական պետերի, պաշտոնատար անձանց և այլ զինծառայողների միջև առաջացող հարաբերություններն են, որոնք կապված են զինվորական ծառայության հետ, իսկ օբյեկտիվ կողմը կարող է դրսևորվել մի շարք արարքների կատարմամբ, մասնավորապես՝ հանցագործությունն օբյեկտիվ կողմից դրսևորվում է հետևյալ արարքների կատարմամբ՝ 1)իշխանությունը կամ պաշտոնեական դիրքը չարաշահելը, 2)իշխանազանցությունը կամ պաշտոնեական լիազորությունների սահմանն անցնելը, 3)իշխանության անգործությունը, իսկ իշխանության անգործությունը դրսևորվում է նրանում, որ պետը կամ պաշտոնատար անձինք չեն կատարում իրենց վրա օրենքով կամ այլ իրավական ակտերով դրված պարտականությունները, չեն խոչընդոտում զորամասում զանազան խախտումներ կատարող անձանց, չեն ձեռնարկում ծառայության բնականոն ընթացքն ապահովելուն ուղղված անհրաժեշտ միջոցառումներ, այսինքն՝ հոդվածում նկարագրված են երեք ինքնուրույն հանցակազմեր, որոնցից իշխանության անգործությունը չունի բռնություն գործադրելով, բռնություն գործադրելու սպառնալիքով կամ զենք կամ հատուկ միջոց օգտագործելով դրսևորումը, իսկ այն առավել բնորոշ է իշխանությունը չարաշահելուն կամ իշխանազանցությունը, ուստի «բռնություն գործադրելով» պայմանի առկայությունը տվյալ արարքի կատարման դրսևորումը գնահատելիս անհրաժեշտ չէ, միաժամանակ, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ «Եթե նորմատիվ իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է ստորակետերով կամ «և» կամ «ու», ինչպես նաև «կամ» շաղկապով բաժանված պայմաններով, ապա ստորակետերով կամ «և» կամ «ու» շաղկապներով բաժանված պայմանների մասով

այդ նորմի կիրառման համար անհրաժեշտ է բոլոր պայմանների առկայությունը (...)», բայց խոսք չի գնում բոլոր պայմանների միաժամանակյա առկայության մասին, որն էական նշանակություն ունեցող հանգամանք է սույն ընդդատության վերաբերյալ հարցը լուծելու համար:

(...)

5.3 ՀՀ քրեական օրենսգրքում (այսուհետ նաև՝ Քրեական նոր օրենսգիրք) տեղ գտած նորամուծությունների, հայեցակարգային փոփոխությունների ու նոր կարգավորումների պայմաններում տեղին է զուգահեռներ անցկացնել Քրեական նոր օրենսգրքի 549-րդ հոդվածով սահմանված վարքագծի համապատասխան կանոնների ու 18.04.2003թ. ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածով սահմանված վարքագծի կանոնների միջև, որի արդյունքում անհրաժեշտ է փաստել հետևյալը.

Մեջբերված քրեաիրավական դրույթների համադրված վերլուծությունից երևում է, ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի դիսպոզիցիայում շարադրված արարքների հանցավորությունը կամ պատժելիությունը չի վերացել քրեական օրենսգրքով, որն ուժի մեջ է մտել հիշյալ հոդվածով սահմանված արարքը կատարելուց հետո, քանի որ այդպիսիք վերափոխվել են Քրեական նոր օրենսգրքում տեղ գտած 549-րդ հոդվածի դիսպոզիցիայում սահմանված վարքագծի կանոններով:

Սույն քրեական գործի ընդդատության վերաբերյալ հարցի լուծման ելակետն է այն հանգամանքը, որ Լուկաշ Պետրոսյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 2-րդ մասով, որպիսի պայմաններում անհրաժեշտ է առանձին փաստել արդյո՞ք արարքը կատարվել է ոչ շահադիտական դրդումներից ելնելով, թե բռնություն գործադրելով, բռնություն գործադրելու սպառնալիքով կամ զենք կամ հատուկ միջոց օգտագործելով:

5.4. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Լուկաշ Պետրոսյանին առաջադրված մեղադրանքի ձևակերպման մեջ նշվել է ենթադրյալ արարքների քրեաիրավական որակման հիմքում ընկած փաստերը, մասնավորապես՝ «08.09.2018թ. զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ ծեծի է ենթարկել իր նկատմամբ ստորադաս հանդիսացող, իր անմիջական ղեկավարության ներքո

գտնվող վաշտի ժամկետային պարտադիր զինծառայող, շարքային Գևորգ Սուրենի Հարոյանին, (…) վիճաբանության ձայներ լսելով դուրս է եկել աշխատասենյակից և զորանոցի ննջարանների մոտ ականատես է եղել Գ.Կարապետյանի և Գ.Հարոյանի միջև առաջացած ծեծկռտուքին, միջամտել և դադարեցրել է վիճաբանությունը, որից հետո փորձել է կարգի հրավիրել Գ.Հարոյանին և նույն վայրում ծեծի է ենթարկել նրան՝ երեքից չորս անգամ աջ և ձախ ձեռքերով ապտակներ է հասցրել վերջինիս դեմքին, ապա Գ.Հարոյանին հրավիրել է աշխատասենյակ և զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ՝ սպային՝ Դ.Կարապետյանին հակաճառելու և նրան հարվածելու, ինչպես նաև վերակարգից ազատվելուց հետո փևական ժամանակ գումարտակի մասնաշենք չներկայանալու պատճառով մեկ անգամ ապտակել է Գ.Հարոյանի դեմքին, ապա այլ բռնություն է գործադրել նրա նկատմամբ՝ համազգեստից բռնելով քաշել և գցել է աշխատասենյակում առկա բազմոցին, ապա նույն պատճառով կրկին ծեծի է ենթարկել նրան՝ երեքից չորս անգամ ապտակներ է հասցրել Գ.Հարոյանի դեմքին»: (…): Բացի այդ, Լուկաշ Պետրոսյանը, (…) 30.09.2018թ.՝ ժամը 21:00-ի սահմաններում, նույն վաշտի 3-րդ դասակի 2-րդ ջոկի հրամանատար, պարտադիր ժամկետային զինծառայող, կրտսեր սերժանտ Մկրտիչ Երեմի Զահաիլյանից տեղեկանալով 29.09.2018թ.՝ ժամը 12:30-ի սահմաններում, վաշտի ննջասենյակում վերջինիս ու նույն դասակի պարտադիր ժամկետային զինծառայող, շարքային Գևորգ Սուրենի Հարոյանի միջև տեղի ունեցած վիճաբանության ընթացքում Մ.Զահաիլյանի կողմից Գ.Հարոյանի ծնողի հասցեին հայհոյանք հնչեցնելու, միմյանց քաշքշելու և փոխադարձ հարվածներ հասցնելու դեպքի մասին՝ այդպիսով անձամբ տեղեկություններ ստանալով իրեն ենթակա անձնակազմի կողմից ենթադրյալ հանցագործություններ կատարելու դեպքի մասին, (…) պարտավոր լինելով կատարված դեպքի մասին անհապաղ զեկուցել վերադաս հրամանատարությանը, ինչպես նաև հայտնել իրավապահ մարմիններին, հակառակ ծառայության շահերի, ենթակա զինծառայողների մոտ իր «հեղինակությունը» բարձրացնելու, դեպքը վերադաս հրամանատարությունից կոծկելու և այդ կերպ Մ.Զահաիլյանին «հովանավորելու» անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով, (…) դրսևորել է իշխանության անգործություն՝ չի կատարել օրենքով և զինվորական

կանոնադրություններով իր վրա դրված պարտականությունները, իրավախախտման դեպքի մասին չի զեկուցել վերադաս հրամանատարությանը, (...)»:

Հատկանշական է, որ Քրեական նոր օրենսգրքի հավելված N1 համաձայն՝ «Իշխանազանցությունը կամ իշխանությունը չարաշահելը (բացառությամբ երբ արարքը կատարվել է ոչ շահադիտական դրդումներից ելնելով և բռնություն գործադրելով, բռնություն գործադրելու սպառնալիքով կամ զենք կամ հատուկ միջոց օգտագործելով)», այսինքն՝ հարկ է փաստել, որ ենթադրյալ արարքը Քրեական նոր օրենսգրքի հավելված N1 ցանկով սահմանված կոռուպցիոն հանցագործությունների շարքին դասելու համար անհրաժեշտ է, որ այն կատարվի շահադիտական դրդումներից ելնելով, որը դրսևորվում է պաշտոնատար անձի կողմից հանցանքը նյութական օգուտ ստանալու կամ ծախսերից կամ պարտավորություններից խուսափելու համար կատարելով, իսկ Լուկաշ Պետրոսյանին առաջադրված մեղադրանքներում բացակայում է այն փաստական տվյալը, որ ամբաստանյալն արարքը կատարել է շահադիտական դրդումով, սակայն առկա է այն ձևակերպումը, որ ենթադրյալ արարքը (իշխանության անգործություն) կատարվել է անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով, ինչպես նաև՝ բռնություն գործադրելով:

6. Վերոգրյալ իրավական նորմերի համակարգային վերլուծության արդյունքում, հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ արդարադատությունը՝ որպես դատական իշխանության դրսևորման հիմնական ձև, պետք է իրականացվի որոշակի սահմաններում, որի չափանիշներից մեկն էլ քրեական գործի ընդդատության ինստիտուտն է, որը սահմանում է, թե որ դատարանն է իրավասու քննել գործը, որպեսզի երաշխավորվեն անձի՝ դատարանի մատչելիության ու արդար դատաքննության իրավունքները, բացառելով քրեական գործը քննելու պատշաճ դատարանի որոշման վերաբերյալ վեճերը, որպիսի պայմաններում Դատարանը հաշվի առնելով քրեական գործով քննության առարկան հանդիսացող հանցագործության բնույթը և մինչդատական վարույթում ամբաստանյալին մեղսագրված արարքի քրեաիրավական որակումները, այն է՝ Լուկաշ Պետրոսյանին առաջադրված մեղադրանքի համաձայն՝ ենթադրյալ արարքը կատարվել է ոչ շահադիտական դրդումներից ելնելով ու բռնություն գործադրելով, ուստի Դատարանը գտնում է, որ թիվ ՀԿԴ/0114/01/22 քրեական գործն այլևս ընդդատյա չէ

Հակակոռուպցիոն դատարանին, այլ ընդդատյա է Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին, ուստի անհրաժեշտ է ՀԿԴ/0114/01/22 քրեական գործը փոխանցել ըստ ընդդատության (…)»[2]:

7. Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի օգոստոսի 10-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Թիվ ՀԿԴ/0114/01/22 քրեական գործով Հակակոռուպցիոն դատարանը 2024 թվականի մարտի 11-ի որոշմամբ արձանագրել է, որ Լուկաշ Պետրոսյանին 2003 թվականի ապրիլի 18-ի խմբագրությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 2-րդ մասով ներկայացված մեղադրանքն իր մեջ չի ներառում շահադիտական դրդումները, ավելին՝ արարքը կատարվել է բռնություն գործադրելու միջոցով:*

Այս տեսանկյունից՝ Դատարանը, չհամաձայնելով վերոնշյալ դիրքորոշման հետ, հարկ է համարում արձանագրել, որ

- Լուկաշ Պետրոսյանի կողմից Գևորգ Հարոյանի նկատմամբ ենթադրաբար բռնություն գործադրելու դեպքի կապակցությամբ վերջինիս ներկայացվել է 2003 թվականի ապրիլի 18-ի խմբագրությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-ին հոդվածի 2-րդ մասով մեղադրանք, ավելին՝ քննարկվող դեպքը ժամանակագրական հաջորդականության տեսանկյունից նախորդել է մեղադրյալ Լուկաշ Պետրոսյանի կողմից ենթադրաբար իշխանական անգործություն ցուցաբերելու և իր պաշտոնական դիրքը չարաշահելու ենթադրյալ արարքներին, քանի որ ենթադրաբար կատարվել է 2018 թվականի սեպտեմբերի 8-ին, մինչդեռ լիազորությունների չարաշահման ենթադրյալ դրսևորումները ենթադրաբար կատարվել են նույն թվականի սեպտեմբերի 30-ին:

- Լուկաշ Պետրոսյանին 2003 թվականի ապրիլի 18-ի խմբագրությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 2-րդ մասով ներկայացված մեղադրանքի ձևակերպումից պարզ է դառնում, որ անզգուշությամբ այլ ծանր հետևանքներ առաջացնելու պատճառը չի հանդիսացել 2018 թվականի սեպտեմբերի 8-ին ենթադրաբար բռնություն գործադրելու դեպքը, քանի որ ըստ մեղադրանքի՝ այդ հետևանքներն առաջացել են Լուկաշ Պետրոսյանի կողմից ենթադրաբար Գևորգ

[2] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 17, թերթեր 159-165:

Հարոյանի հասցեին հայհոյանքներ հնչեցնելու և Մկրտիչ Չախախյանի կողմից ենթադրաբար վերջինիս նկատմամբ բռնություն գործադրելու հետևանքով:

- Լուկաշ Պետրոսյանի կողմից լիազորությունները չարաշահելու ենթադրյալ արարքը, թեև կատարվել է անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով, սակայն չի զուգորդվել բռնություն գործադրելով, բռնություն գործադրելու սպառնալիքով կամ զենք կամ հատուկ միջոց օգտագործելով:

Այսպիսով, հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշումներում շարադրված վերլուծություններն ու դատողությունները, Դատարանն արձանագրում է, որ սույն քրեական գործն ընդդատյա չէ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, հետևաբար նաև հաշվի առնելով, որ սույն քրեական վարույթն ըստ ընդդատության Հակակոռուպցիոն դատարանից ուղարկվել է Դատարան, որպիսի պայմաններում կրկին քրեական վարույթի փոխանցումը Հակակոռուպցիոն դատարան հղի է քրեական վարույթի առարկայական ընդդատության վերաբերյալ վեճի կապակցությամբ կրկնակի շրջապտույտ ստեղծելու վտանգով, ուստի, Դատարանի գնահատմամբ, ստեղծված իրավիճակի հանգուցալուծումը կարող է տեղի ունենալ միայն վարույթի առարկայական ընդդատությունը Վճռաբեկ դատարանի կողմից լուծելով (…)»[3]*:*

<u>Սույն որոշման հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Նախևառաջ հարկ է նշել, որ համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 5-րդ մասի՝ վարույթն ըստ ընդդատության ստացած հակակոռուպցիոն կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը **մինչև նախնական դատաքննություն նշանակելը եռօրյա ժամկետում** որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին, եթե համաձայն չէ դրա առարկայական ընդդատությանը: Մինչդեռ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն դեպքում Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը որոշում է կայացրել թիվ ՍԴ3/0138/01/21 (ՀԿԴ/0114/01/22) քրեական գործով ընդդատության մասին վեճը լուծելու համար վարույթը Վճռաբեկ դատարան

[3] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 18, թերթեր 103-111:

ուղարկելու մասին վերոնշյալ ժամկետի խախտմամբ: Վճռաբեկ դատարանը, սակայն, հիմք ընդունելով անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հիմնարար նշանակությունը և դրա՝ արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասը հանդիսանալը, գտնում է, որ սույն վարույթի ընդդատության հարցը ենթակա է լուծման:

8. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր է արդյոք Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՍԴ3/0138/01/21 (ՀԿԴ/0114/01/22) քրեական վարույթն ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին:

9. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

10. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք, (…) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք*»:

10.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, «*օրենքի հիման վրա ստեղծված դատարան*» հասկացությունը մեկնաբանելիս նշել է. «*Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ*»[4]:

Միևնույն ժամանակ, դատարանի մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ. «*Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ*

[4] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»[5]*:*

11. Վճռաբեկ դատարանը *Գևորգ Հարությունյանի* գործով իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ. «*(…) Գործերի պատշաճ ընդդատությունը, որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար իրավական արժեք է: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (…), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (6-րդ հոդված): (…)*

Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հստակ կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախապատրամադրվածություն չունեն, և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայականությունը բացառված են եղել:

Այսպիսով, քրեական գործերի ընդդատության որոշման հստակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը պարտադիր նախապայման են արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման համար (…)»[6]*:*

12. Վերոգրյալից հետևում է, որ ընդդատության կանոններն այն չափանիշներն են, որոնց հիման վրա որոշվում է, թե տվյալ գործով որ դատարանը պետք է

---

[5] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

[6] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

իրականացնի արդարադատություն: Ընդդատության կանոնները կոչված են անձին զերծ պահելու դատական շրջապտույտից, որը կարող է առաջանալ, եթե դատարանները հրաժարվեն գործը վարույթ ընդունել՝ իրենց ընդդատյա չլինելու պատճառաբանությամբ:

Ընդդատության ինստիտուտը հիմնարար նշանակություն ունեցող արժեք է, քանի որ այն անմիջականորեն կապված է անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հետ: Քրեական վարույթի մասնակիցների համար պետք է կանխատեսելի լինի, թե իրենց գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն:

Անհրաժեշտ է ընդգծել, որ վարույթն ըստ ընդդատության փոխանցելիս, չպետք է դրսևորվի չափազանց ձևական մոտեցում, և պետք է հաշվի առնվի նաև արդարադատության շահը:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 260-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության և Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարաններին (այսուհետ՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան) ընդդատյա են առաջին ատյանի կարգով իրականացվող բոլոր վարույթները, բացառությամբ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ վարույթների, որոնք ընդդատյա են հակակոռուպցիոն դատարանին»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Նախնական դատաքննության ընթացքում պարզելով, որ տվյալ վարույթն ընդդատյա չէ իրեն, դատարանն այդ որոշմամբ անհապաղ փոխանցում է ըստ ընդդատության:*

(…)

5. Վարույթն ըստ ընդդատության ստացած հակակոռուպցիոն կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատաքննություն նշանակելը նոտարյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին, եթե համաձայն չէ դրա առարկայական ընդդատությանը:

(…)

8. Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի նախագահը, Վճռաբեկ դատարանի քրեական և հակակոռուպցիոն պալատների նախագահները վարույթը Վճռաբեկ դատարանում սրանալու պահից տասնօրյա ժամկետում վերջնականապես լուծում են վարույթի առարկայական ընդդատության հարցը՝ ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ: Քվեարկելիս ձեռնպահ մնալ չի թույլատրվում:

9. Սույն հոդվածով սահմանված կարգով որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան»:

13.1. «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2024 թվականի հունվարի 16-ի թիվ ՀՕ-31-Ն ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ *«Օրենսգրքի հավելված N 1-ում՝ (…)*

***«Հոդված 549. Իշխանազանցությունը կամ իշխանությունը չարաշահելը» բառերից հետո լրացնել «(բացառությամբ երբ արարքը կատարվել է** ոչ շահադիտական դրդումներից ելնելով և բռնություն գործադրելով, բռնություն գործադրելու սպառնալիքով կամ զենք կամ հատուկ միջոց օգտագործելով)» բառերով»:*

13.2. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Նորմատիվ իրավական ակտում նորմի կիրառման համար թվարկված բոլոր պայմանների առկայությունը պարտադիր է, եթե իրավական ակտում*

1) նշված նորմի կիրառումը պայմանավորված է միայն «և» կամ «ու» շաղկապով բաժանված պայմաններով, կամ

2) նշված նորմի կիրառումը պայմանավորված է միայն ստորակետերով բաժանված պայմաններով, կամ

3) նշված նորմի կիրառումը պայմանավորված է ստորակետերով և «և» կամ «ու» շաղկապով բաժանված պայմաններով:

(…)

4. Եթե նորմատիվ իրավական ակտում թվարկված բոլոր պայմաններից բավական է միայն մեկի առկայությունը, ապա չի կարող կիրառվել «և» կամ «ու» շաղկապը, կամ դրանք չեն կարող բաժանվել ստորակետով կամ կետադրական այլ նշանով»:

13.3. Նշված նորմերի համակարգային վերլուծությունից հետևում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 549-րդ հոդվածը (համապատասխանում է 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածին) չի համարվում կոռուպցիոն բնույթի հանցանք՝ հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության պարագայում, երբ արարքը կատարվել է՝ ա) ոչ շահադիտական դրդումներից ելնելով, բ) բռնություն գործադրելով, բռնություն գործադրելու սպառնալիքով կամ զենք կամ հատուկ միջոց օգտագործելով: Հետևաբար, նշված պայմաններից որևէ մեկի բացակայության դեպքում, հանցանքը համարվում է կոռուպցիոն բնույթի և ենթակա չէ փոխանցման առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

14. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Հակակոռուպցիոն դատարանը, փաստելով, որ Լուկաշ Պետրոսյանին առաջադրված մեղադրանքի համաձայն՝ վերջինս ենթադրյալ արարքը կատարել է անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով և բռնություն գործադրելով, գտել է, որ թիվ ՀԿԴ/0114/01/22 քրեական վարույթն այլևս ընդդատյա չէ Հակակոռուպցիոն դատարանին[7]:

- Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանն իր անհամաձայնությունն է հայտնել Հակակոռուպցիոն դատարանի որոշմանը՝ արձանագրելով, որ Լուկաշ Պետրոսյանի կողմից լիազորությունները չարաշահելու ենթադրյալ արարքը թեև կատարվել է անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով, սակայն չի զուգորդվել «*բռնություն գործադրելով, բռնություն գործադրելու սպառնալիքով կամ զենք կամ հատուկ միջոց օգտագործելով*»[8]:

15. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշմամբ վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ պետք է փաստել, որ Լուկաշ Պետրոսյանին առաջադրված մեղադրանքի բովանդակությունից հետևում է, որ Գ.Հարոյանը, Լ.Պետրոսյանի, ինչպես նաև Մ.Չախախյանի ենթադրյալ **գործողությունների հետևանքով**, գտնվելով խիստ ընկճված վիճակում, ինքնաձիգից մեկ կրակոց է

[7] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:
[8] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

արձակել իր կրծքավանդակի հատվածում, ինչը հանգեցրել է վերջինիս մահվան: Մեղադրական եզրակացության ուսումնասիրությունից երևում է, որ Լ.Պետրոսյանի, ինչպես նաև Մ.Չախախյանի գործողությունները ներառում են նաև 2018 թվականի սեպտեմբերի 8-ին և սեպտեմբերի 29-ին տեղի ունեցած ենթադրյալ բռնություն գործադրելու դեպքերը: Բացի այդ, հարկ է փաստել, որ ըստ մեղադրանքի՝ Լ.Պետրոսյանը վերագրվող ենթադրյալ արարքը կատարել է անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով:

Այլ կերպ՝ Լ.Պետրոսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-ին հոդվածի 2-րդ մասով, 360-րդ հոդվածի 2-րդ մասով և 375-րդ հոդվածի 2-րդ մասով առաջադրված մեղադրանքի բովանդակությունն առերևույթ հիմք է տալիս փաստելու, որ ենթադրյալ արարքը կատարվել է՝ ոչ շահադիտական դրդումներից ելնելով և բռնություն գործադրելով: Հետևաբար, գտնում ենք, որ առկա է սույն վարույթը Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին ընդդատյա լինելու իրավական հիմքը:

16. Վերոշարադրյալը հիմք է տալիս փաստելու, որ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՍԴ3/0138/01/21 (ՀԿԴ/0114/01/22) քրեական վարույթն ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին, հիմնավոր չէ:

17. Վերոգրյալի հիման վրա գտնում ենք, որ թիվ ՍԴ3/0138/01/21 (ՀԿԴ/0114/01/22) քրեական վարույթն ընդդատյա է Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

Ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 8-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն Ք

Մկրտիչ Երեմի Չախախյանի վերաբերյալ՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 1-ին մասով, 358.1-րդ հոդվածի 4-րդ մասով և Լուկաշ Սամվելի Պետրոսյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 2-րդ մասով, 360-րդ հոդվածի 2-րդ մասով, 375-րդ հոդվածի 2-րդ

մասով թիվ ՍԴ3/0138/01/21 (ՀԿԴ/0114/01/22) քրեական վարույթն ընդդատյա է Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ	ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՀԱՄԼԵՏ ԱՍԱՏՐՅԱՆ	ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆ